դրութեան սրբոյն Բարսղի, որոց երկոցունց տեղեացն անունանք Հաղբատ և Սանահին հանդէպ միմեանց...։ Եւ առաջնորդ Սանահնի՝ Յովհաննէս գիտնական այլն Աստուծոյ»[1]։

Սամուել Անեցին Սանահնի վանքի հիմնադիր է համարում Աշոտ Ողորմածի կնոջը՝ Խոսրովանուշ թագուհուն և որոշակի նշում է հիմնարկության ՆԺԶ (416+551=967) թվականը։

Նա գրում է.

«Ի ՆԺԶ թվին շինեցաւ Հաղբատ և Սանահինն՝ ԺԱ ամաւ առաջ քան զՀաղբատ շինեցաւ ի Խոսրովանուշ թագուհւոյն՝ ի կնոջէ Աշոտոյ Շահնշահի»[2]։

Այժմ գիտության մեջ ընդունված է այս կարծիքը։ Լեոն իր բազմահատոր «Հայոց Պատմության» մեջ գրում է, որ Հաղբատի վանքը 967 թ. կառուցել է «Աշոտի ամուսին Խոսրովանուշ հայոց տիկինը։ Նույն տիկնաց տիկինն էր, որ տասը տարի առաջ շինել էր Սանահնի նույնպես հռչակավոր վանքը»[3]։

Նկ. 3. Վանքի գլխավոր շենքերի ընդհանուր տեսարանը ա՝ կողմից։

Նույն կարծիքին է նաև Օրմանյանը. նա «Ազգապատումի» առաջին հատորում գրում է, որ «Սանահին շինված է 957-ին և տասը տարի ետքը՝ Հաղբատ 967-ին, և հիմնադիրն եղած է Աբասի որդի և հաջորդ Աշոտ Ողորմածի կողակիցը՝ Խոսրովանուշը թագուհին»[4]։

Սամուել Անեցու վերոհիշյալ տեղեկությունը կրկնել են 13-րդ դարի և հետագայի ժամանակագիրները զանազան աղավաղումներով։ Երբեմն սխալ հասկանալով Անեցու գրածը, փոխանակ Սանահինը հին համարելու, Հաղբատի հիմնարկությունն են 10 տարով առաջ դրել (Ստեփանոս Օրբելյան, և այլն), երբեմն էլ թվականի գրերը ճիշտ չեն կարդացել և Ե-ն Է-ի են վերածել ու վանքի հիմնարկությունը երկու տարով նորացրել են։ Այսպես, օրինակ, ժամանակագիրներից մեկը գրում է.

«Յաւուրս սորա (Աշոտոյ Ողորմածի)

[1] Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն, էջ 181։

[2] Սամուելի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, էջ 100։

[3] Լեո, Հայոց պատմություն, երկրորդ հատոր, Երևան, 1947, էջ 599։

[4] Ազգապատում, գրեց Մաղաքիա արքեպ. Օրմանյան, հատ. 1-ին, կ. Պոլիս, սկսյալ 1912, էջ 1104։